ԼՂԻՄ-Ի ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերջին օրերին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը ընդհանուր առմամբ չի փոխվել։ Մարդիկ դարձյալ չեն գնում իրենց աշխատատեղերը։

Հունիսի 4-ի երեկոյան մարզի կենտրոնի Հաղթանակի հրապարակում տեղի ունեցավ քաղաքի աշխատավորների հերթական միտինգ։ Մարդիկ միտինգի էին եկել տրանսպարանտներով, որոնց վրա գրված էր. «Ղարաբաղցիները ազատություն են պահանջում», «Միացում, միայն միացում»։ Նրանք բերել էին նաև ուրիշ լոզունգներ, ճայկական ազգային խորհրդանշանը հանդիսացող եռագույն դրոշներ։

Միտինգը բացեց երկրամասում հայտնի մանկագիր Գուրգեն Գաբրիելյանը։ Եղույթ ունեցան Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի դիրեկտոր Աշոտ Ստեփանյանը, Ղարաբաղի մետաքսի կոմբինատի կուսակցամակերպության քարտուղար Ռոբերտ Քոչարյանը, աշխատանքի վետերան Իշխան Ավետիսյանը, կուսակցության քաղաքային կոմիտեի քարտուղար Հասմիկ Միքայելյանը և ուրիշներ։ Նրանք նշեցին, որ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարում մի շարք ելույթներ տոգորված են լճացման ժամանակների գաղափարներով, ինչը լուրջ մտահոգություն է պատճառում վերակառուցման կողմնակիցներին։ Նրանք այն միտքը հայտնեցին, որ Ղարաբաղի պրոբլեմը կարող է լուծվել միայն ազգամիջյան հարաբերությունների հարցերում նոր մտածողության հաղթանակի, հասարակական կյանքի հետագա դեմոկրատացման շնորհիվ։ Միտինգի մասնակիցները հույս հայտնեցին, որ համագումարում հակավերակառուցողական ուժերի դեմ հուսալի պատնեշ կընկանգնեցվի։ Նրանք միևնույն ժամանակ բնակչությանը կոչ արեցին առաջվա պես պահպանել հանգստություն և տոկունություն, չենթարկվել հնարավոր պրովոկացիաներին։

Հունիսի 5-ին Ստեփանակերտում և մարզում իրավիճակը մնում էր նախկինը։ Ծատերի կարծիքով, ՏԱՍՍ-ի վերջին հաղորդագրության մեջ այդ իրավիճակը չափից ավելի է դրամատիկացված։ Երկրամասի բնակիչները սրտի ցավով ընդունեցին Բաշկիրիայի տարածքում տեղի ունեցած սոսկալի ողբերգության լուրը։ Նրանք պատրաստակամություն հայտնեցին ուժերի ներածի չափ օգնություն ցույց տալ տուժածների ընտանիքներին։

Ինքնավար մարզում համեմատաբար անդորր է տիրում։ Մարդիկ անհամբերությամբ են սպասում համագումարում իրենց դեպուտատի ելույթին։

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ